ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

12 հոկտեմբերի հինգշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

143
(2809)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՊԱՊԻԿՅԱՆԸ ՈՉ ՈՔԻ ՀԵՏ ՉԻ ՇՓՎՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ՊՆ նախարար Սուրեն Պապիկյանը, որը նաեւ ՔՊ կուսակցության վարչության անդամ է, վերջին շրջանում «երես է թեքել» իր թիմակիցներից, չի շփվում նրանց հետ: Անգամ երբեմնի իր մտերիմների համար Պապիկյանին գտնելն ու նրա հետ կապի դուրս գալը լուրջ խնդիր է դարձել, իսկ ՔՊ-ականների մի մասի հետ էլ առհասարակ չի շփվում: Վերջինս կուսակցական քննարկումներին անհաղորդ է, չի մասնակցում դրանց, անգամ սահմանային լարված իրավիճակներում, երբ ինչ-որ բան է պետք լինում ճշտել, թիմակիցներին չի հաջողվում Պապիկյանից իմանալ, շատ դեպքերում միջնորդներ են խառնում, որպեսզի նրա հետ կապի դուրս գան: Ինչպես մեր աղբյուրներն են պատմում, անգամ սեպտեմբերի 17-ի ավագանու ընտրություններից երկու օր առաջ կայացած ՔՊ-ի աղմկոտ հանրահավաքին Պապիկյանին մի կերպ են համոզել, որ գա ու մասնակցի: Իշխանականները տարօրինակ են համարում Պապիկյանի այս պահվածքը, քանի որ վերջինս ՔՊ-ում այն քչերից է եղել, որը բոլորի հետ լեզու է գտել ու թիմում առկա տարաձայնությունները հարթել է: Սուրեն Պապիկյանը ՔՊ-ում մշտապես Փաշինյանի սիրելիներից է համարվել, բայց հիմա Պապիկյանն այլ է դարձել:

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանի տեղակալ Անի Իսպիրյանը պաշտոնի նշանակվել է 2021 թվականի սեպտեմբերի 14-ին: Անի Իսպիրյանը հայտարարագրել է 2 բնակարան բազմաբնակարան շենքում: Բնակարաններից մեկը համատեղ սեփականությամբ ձեռք է բերել 2007 թվականին Երեւանի Նոր Նորք վարչական շրջանում: Երկրորդ բնակարանը ձեռք է բերել 2017 թվականին Ռուսաստանի Դաշնությունում, որը միանձնյա սեփականությամբ է գնված: Էկոնոմիկայի փոխնախարարի բանկային ավանդները կազմել են 102 հազար ռուբլի եւ 3 մլն դրամ: Բանկային հաշիվների մնացորդները կազմել են 6500 ռուբլի եւ 2 մլն դրամ: Նրա կանխիկ դրամական միջոցները կազմել են 10 հազար դրամ: Նախարարի տեղակալի հաշվետու տարվա եկամուտները կազմել են 14 մլն 935 հազար դրամ, որից 14 մլն 901 հազար դրամը աշխատանքի վարձատրություն է ՀՀ էկոնոմիկայի նախարարությունից, իսկ 33 հազար դրամը աշխատանքի վարձատրություն է Ռուս-հայկական (Սլավոնական) համալսարանից: Հավելենք նաեւ, որ Անի Իսպիրյանը մինչ փոխնախարարի պաշտոն ստանձնելը ապրել եւ գործունեություն է ծավալել Ռուսաստանի Դաշնությունում: Մասնավորապես, 2014-2018 թվականներին նա աշխատել է Կենտրոնական գիտահետազոտական ինստիտուտի «Ցենտր» դաշնային պետական ունիտար ձեռնարկությունում (ՌԴ արդյունաբերության եւ առեւտրի նախարարություն)՝ որպես բիզնես վերլուծաբան, եղել է ռազմաարդյունաբերական ոլորտի ներդրումային նախագծերի ռիսկերի կառավարման բաժնի ղեկավար: Այնուհետեւ՝ մինչեւ Ռուսաստանի Դաշնության նախագահին առընթեր ազգային տնտեսության եւ պետական կառավարման ռուսական ակադեմիայում աշխատելը, Իսպիրյանը եղել է «Մոդուլ» ՍՊԸ շինարարական ընկերությունում գործադիր տնօրեն: Կարճ ասած, եզակի ապահովված փոխնախարարներից է:

ՀՀ 2024 թվականի պետական բյուջեի նախագիծն արդեն խորհրդարանում է: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ առաջիկայում խորհրդարանում կսկսվեն բյուջեի նախագծի շուրջ քննարկումները, երբ խորհրդարան կգան կառավարության բոլոր անդամները: Մինչ այս տեղեկացանք, որ Նիկոլ Փաշինյանի գլխավորած կառավարությունն այս անգամ եւս որոշել է որպես նշաձող սահմանել 7 տոկոս տնտեսական աճը: Ամեն դեպքում, այդպես է ամրագրված Նիկոլ Փաշինյանի ուղերձում: Նաեւ նրա ուղերձում ընդգծվում է, որ մեծ թվով սպառնալիքներ եւ խնդիրներ կան, որոնք պետք է հաղթահարել: Հավելենք, որ նախնական նախագծում կար հատկացում նաեւ Արցախին 144 մլրդ դրամի չափով:



Երեւանի նախկին քաղաքապետ Ալբերտ Բազեյանին պահում են Նուբարաշենի բանտի մենախցում ու կտրել են նրա կապը արտաքին աշխարհի հետ: «Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ Ալբերտ Բազեյանը դիմում է գրել բանտի ղեկավար կազմին իրեն թերթ տալ, ինչպես մյուս կալանավորներին են տալիս, կամ հեռուստացույց, սակայն դիմումին որեւէ պատասխան չի եղել: Վերջինիս պաշտպան Գեորգի Մելիքյանը հայտնեց, որ Ալբերտ Բազեյանի նկատմամբ այս պատժամիջոցների՝ մենախցում պահելու, արտաքին աշխարհի հետ կապը կտրելու դրսեւորումների մասով դիմում է ներկայացրել Մարդու իրավունքների պաշտպանին, ու մինչ օրս արձագանք չկա: Նշենք, որ Ալբերտ Բազեյանն ԱԱԾ-ում ասել է, որ իր նկատմամբ քաղաքական հետապնդում է իրականացվում: Ըստ ԱԱԾ-ի՝ «Խաչակիրներ» ռազմամահայրենասիրական ՀԿ անդամները, ինչպես նաեւ Ալբերտ Բազեյանը եւ այլ անձինք, ունենալով հակահիշխանական հայացքներ, ՀՀ կառավարության անդամների եւ ղեկավարի նկատմամբ գաղափարական թշնամանք, նախնական համաձայնության գալով միմյանց հետ, պայմանավորվածություններ են ձեռք բերել իրենց մոտ պահվող զենք-զինամթերքը որպես հանցագործության գործիք օգտագործելու միջոցով կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելու եղանակով եւ դրա սպառնալիքով զավթելու իշխանությունը, մասնավորապես՝ Սահմանադրությամբ չնախատեսված այլ եղանակով տիրանալու Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորություններին: Հանցավոր խմբի անդամները ձեռք են բերել հեռահաղորդակցության սարքեր, հեռախոսային ու այլ կապը խլացնող սարքեր, հանցանքի կատարումը հեշտացնող միջոցներ եւ գործիքներ, ինչպես նաեւ դիտավորությամբ ստեղծել են այլ պայմաններ՝ այդկերպ նախապատրաստվելով կատարել նախնական համաձայնությամբ, խմբի կազմում իշխանության յուրացում, սակայն իրենց կամքից անկախ հանգամանքներով չեն կարողացել սկսել իրենց դիտավորության մեջ ընդգրկված հանցանքի օբյեկտիվ կողմի կատարումը, նախապատրաստվող առանձնապես ծանր հանցագործությունը բացահայտվել եւ խափանվել է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության աշխատակիցների կողմից:

ԶՐՈՒՅՑ

ՈՎՔԵ՞Ր ԵՆ ՀԱՐՁԱԿՎԵԼ ՉԱԽՈՅԱՆԻ ՎՐԱ

«Ժողովուրդ» օրաթերթի զրուցակիցը «Հեղափոխության դահաղաններ» ՀԿ նախագահ Հայկ Ստեփանյանն է: Մեր զրուցակիցը բացահայտել է, թե նախօրեին ովքեր էին հարձակվել ակտիվիստ Արթուր Չախոյանի վրա մահափորձի նպատակով, ու ինչ է սպասվում առաջիկայում: Ստեփանյանը նշել է նաեւ, որ իշխանություններն ամեն քայլի դիմելու են, որպեսզի Արթուր Չախոյանին հեռացնեն ասպարեզից:

-Ովքե՞ր են հարձակվել Արթուր Չախոյանի վրա, ինչպե՞ս է եղել դեպքը: Ի՞նչ են ուզել Արթուրից:

-Ըստ այն տեղեկությունների, որոնք ես ստացել եմ Արթուրից, ապա գործընթացից տեղեկացա՝ երեկոյան տուն վերադառնալիս Արթուրին սպասել են շքամուտքի մոտ, մոտեցել են, սկսել հարվածներ հասցնել, առանց որեւէ պարզաբանման: Երեք հոգի են եղել: Ըստ էության, Արթուրը որեւէ մեկի հետ ծանոթ չի եղել, երբեւէ չի հանդիպել, անձնական շփում չի ունեցել, հետեւաբար անծանոթ մարդկանց հարձակվելը մեկ այլ մարդու վրա խոսում է միայն մի բանի մասին, որ դա ուղղորդված է եղել: Ինչպես հայտնի է, Արթուր Չախոյանը իր գործունեությունը ծավալում է՝ Երեւանի քաղաքապետարանի աշխատանքը ուսումնասիրելու, կոռուպցիոն հնարավոր ռիսկերը բացահայտելու, վատ կատարած աշխատանքները վեր հանելու, եւ, ըստ էության, որեւէ այլ գործունեությամբ չի զբաղվում: Վարկածը հենց այդ ուղղությամբ է տարվում: Հարձակվողները եղել են զինված դանակներով, եւ այդ քաշքշուկի ընթացքում հաջողվել է վնասազերծել նրանցից մեկին եւ հանձնել իրավապահ մարմիններին:

Հետո համացանցում տարածվեց տեղեկություն, որ այդ անձը, որին Արթուրին հաջողվել էր վնասազերծել, արդեն իսկ դատապարտված է եղել երկու անգամ կրկին դանակահարության համար, եւ, ի զարմանս մեզ, երկու օր առաջ Քննչական կոմիտեն հայտարարություն տարածեց, որ այդ անձը չի կալանավորվել: Խոսակցություն գնաց այն մասին, որ, իբրեւ թե, այդ անձը եկել է Արթուրին հանդիպելու, որովհետեւ Արթուրը ինչ-որ նյութեր է փոխանցել ադրբեջանական կողմին: Նախ՝ այդ մասով. բոլորիս հայտնի է, որ Գորիս քաղաքում, երբ Արթուրը մեկնում էր օգնություն ցուցաբերելու արցախահայությանը, այնտեղ սեղանի խնդիր է առաջացել, մարդիկ գետնին էին հաց ուտում, եւ Արթուրը սեղան է ուզեցել վերցնել, որը ոստիկանները չեն տվել, եւ այդ մասին «լայվ» է արել Արթուրը, որը վերցրել են ադրբեջանցիները եւ իրենց մեկնաբանությամբ տեղադրել:

Զարմանալին այն է, որ այդ մարդու ցուցմունքը վերցվել է որպես հիմք Քննչական կոմիտեում, եւ, դրա հիման վրա, ինչ-որ գործողություններ են կատարվում: Հարց է առաջանում՝ կարո՞ղ է մի անձ, որը երկու անգամ դատապարտվել է դանակահարության համար, ավելի շատ ինֆորմացիայի տիրապետել, քան ՀՀ ԱԱԾ-ն. եթե Արթուրը իսկապես նման բան է արել, ապա առնվազն Ազգային անվտանգության ծառայությունը պետք է Արթուրով զբաղվեր:

Զրուցեց ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ

ԱԿՆԿԱԼԻՔՆԵՐ

ՀԱՎԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԿԱ

«Եթե մենք առաջիկայում Բրյուսելում հանդիպենք եւ արձանագրենք այդ երեք սկզբունքները, որոնք արտահայտված են Շառլ Միշելի՝ 2023 թվականի մայիսի 14-ի եւ հուլիսի 15 հայտարարություններում, դա կնշանակի, որ կողմերն անկեղծորեն խաղաղության են ուզում գնալ, եւ 70 տոկոս հավանականություն կա, որ 2-3 ամսում խաղաղության դայմանագիր կստորագրվի, հակառակ դեպքում մենք մտածելու շատ բան կունենանք»,- երեկ Հանրային հեռուստաընկերության եթերում նման հայտարարություն էր արել Նիկոլ Փաշինյանը:

Նրա այս հայտարարությունից կարող ենք արձանագրել, որ հոկտեմբերի վերջին Բրյուսելում սպասվող հանդիպումից շատ բան է կախված՝ կամ խաղաղություն, կամ ռազմական նոր էսկալացիա. ահա այսպիսի երկընտրանքի առջեւ է կանգնած Հայաստանի Հանրապետությունը:

Հիշեցնենք, որ հոկտեմբերի 5-ին Գրանադայի հնգակողմ հանդիպումը չեղարկելուց բառացիորեն ժամեր անց Բաքուն հայտարարեց, թե պատրաստ է շարունակել քննարկումները Բրյուսելում, բայց՝ եռակողմ՝ Եվրամիություն-Ադրբեջան-Հայաստան ձեւաչափով:

Նիկոլ Փաշինյանը երեկ իր հարցազրույցում վերահաստատեց, որ Հայաստանը նույնպես պատրաստ է բրյուսելյան հանդիպմանը: Թե ինչ է լինելու ԵՄ հովանու ներքո անցկացվող այս հանդիպման օրակարգում, ինչ հարցեր են քննարկվելու, կողմերը փակագծեր չեն բացել, բացի այն, որ հույս են հայտնել, թե հնարավորինս սեղմ ժամկետում խաղաղության պայմանագիր կստորագրվի:

Միայն մի բան հստակ է, որ Արցախը բռնազավթելուց հետո Ադրբեջանի ախորժակը բացվել է ու հիմա էլ անկլավներ է պահանջում Հայաստանից: Ավելին՝ այս հարցում նրան սկսել է «ձայնակցել» նաեւ Թուրքիան, որի նախագահը նույնպես սպառնալիքներով է խոսում հայկական կողմի հետ:

Այսպիսով, Եվրամիության խորհրդի նախագահ Շառլ Միշելի հետ հեռախոսազրույցում Ալիեւն ասել էր, թե պատրաստ է խաղաղության պայմանագրի շուրջ քննարկումներ սկսել, բայց Ադրբեջանի 8 գյուղ դեռեւս Հայաստանի «օկուպացիայի» տակ են, անհրաժեշտ է դրանք «ապաօկուպացնել»:

Նիկոլ Փաշինյանն էլ իր հերթին, արձագանքելով Ալիեւի այս ռազմատենչ հայտարարությանը, իր հարցազրույցում ասաց՝ եթե Ադրբեջանը բարձրացնում է 8 գյուղերի հարց, մենք էլ մեր հերթին 8 գյուղի խնդիր ունենք, որովհետեւ Տավուշի մարզում մենք ունենք Ադրբեջանի կողմից օկուպացված տարածքներ:

Թե ինչ զարգացումներ են հնարավոր առաջիկայում, արդյոք բրյուսելյան հանդիպումը կլինի մեկ քայլ առաջ դեպի խաղաղություն, թե, հակառակը, ռազմական նոր էսկալացիայի պատճառ կդառնա, ժամանակը ցույց կտա, բայց մի բան հստակ է՝ որքան Հայաստանը միակողմանի զիջումների է գնում եւ խաղաղություն ակնկալում, այնքան Ադրբեջանի եւ Թուրքիայի ախորժակը բացվում է, ու նրանց հայտարարություններն ավելի ռազմատենչ են դառնում:

ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ԿԱԼԱՆԱՎՈՐՎԵԼ Է

Հակակոռուպցիոն կոմիտեն ՊՆ-ից չարաշահումների դեպքերով ընկել է բանակին ապրանք մատակարարող ընկերությունների տնօրենների հետեւից, ու առաջին կալանավորումն է օրերս եղել: «Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ կալանավորվել է «Մոսեսքո» ընկերության տնօրեն Կարեն Գրիգորյանը: Օրերս կոմիտեն հայտնեց, որ ՀՀ պետական վերահսկողական ծառայության ուսումնասիրության հիման վրա նախաձեռնված քրեական վարույթով ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների կողմից իրականացված մեծածավալ օպերատիվ-հետախուզական միջոցառումների եւ քննչական համալիր գործողությունների արդյունքում փաստական տվյալներ են ստացվել այն մասին, որ Ռ. Բ-ն, զբաղեցնելով ՀՀ պաշտպանության նախարարության N զորամասի հրամանատարի եւ ՀՀ ՊՆ կարիքների համար ներկրվող միջոցների ընդունման համար ստեղծված հանձնաժողովի նախագահի պաշտոնը, շահադիտական նպատակով կատարել է պաշտոնեական կեղծիք եւ օժանդակել Կ. Գ.-ի կողմից ՀՀ ՊՆ-ից առանձնապես խոշոր չափերի՝ շուրջ 60 մլն ՀՀ դրամի հափշտակությանը: ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար 240 տոննա «Տոսոլ Ա-40» տեսակի հակասառիչ նյութի ձեռք բերման համար 2017 թվականի ապրիլին իրականացված մրցույթին մասնակցել եւ հաղթող է ճանաչվել «Մոսէսքո» ՍՊ ընկերությունը՝ առաջարկելով 94.320.000 ՀՀ դրամ (1կգ-ի արժեքը՝393 ՀՀ դրամ): Դրանից հետո հիշյալ ՍՊԸ տնօրեն Կ. Գ.-ի հետ կնքվել է պետական գնման պայմանագիր, որով ընկերությունը պարտավորվել է անհրաժեշտ կարգով եւ ժամանակացույցով մատակարարել պայմանագրով սահմանված տեխնիկական բնութագրին համապատասխանող «Տոսոլ Ա-40» տեսակի հակասառիչ նյութ, ինչը, հետագայում պարզվել է, չի մատակարարվել, իսկ գումարները վճարվել են: Ի դեպ, դեռեւս տարիներ առաջ մամուլը գրեց, որ ՊՆ-ի հետ առավել խոշոր պայմանագրեր են կնքել, օրինակ, «Ֆլեշ», «Էլիտ կապիտալ», «Ավանգարդ» ՍՊԸ-ները, «Արպ անիվ» ՍՊԸ-ն, «Մոսեսկո» ՍՊԸ-ն, եւ գնումների ավելի քան 40 տոկոսը նրանց մեջ է բաշխվում, այսինքն՝ մնացած ընկերությունները հաղթում են, բայց մրցույթի արդյունքում գեներացնում են շատ փոքր տորթի կտորներ: Այս ընկերություններն ուսումնասիրելիս արձանագրվել են, որ դրանք չունեն կայք, եւ թերհայտարարագրման ռիսկեր կան: Այս ընկերությունները հաղթում են 2015-ից ի վեր: Նրանք կարծես թիրախավորված են միայն ՊՆ-ի մատակարարումներով: Կասկածներ կան, որ գործ ունեն միջնորդավորված գնումների կամ ոչ պատշաճ ընթացակարգերի հետ: Դատելով իրավիճակից՝ առաջիկայում մի շարք ընկերությունների տնօրեններ կհայտնվեն ճաղերի հետեւում:

ԱՐՑԱԽԻ ԲՅՈՒՋԵՆ

ԱՀ-ն հունվարի 1-ից լուծարվելու է: Այս մասին վկայում է Արցախի նախկին նախագահ Սամվել Շահրամյանի ստորագրած հրամանագիրը: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ավելի քան 100 հազար արցախցի տեղափոխվել է Հայաստան, որից շուրջ 54 հազարը տեղավորվել է պետության կողմից տրամադրված կացարաններում: Նրանց ֆինանսական ապահովման մասին հոգում է կառավարությունը՝ տրամադրելով միանվագ 100 հազար դրամ յուրաքանչյուր անձի հաշվով, հետագայում էլ նախատեսվում են աջակցության այլ ծրագրեր: Շարունակելով ֆինանսական թեման՝«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Արցախում եղած բանկերի գումարները, ավանդները արդեն Հայաստանում են: Հարց է առաջանում՝ իսկ ինչ եղավ պետբյուջեի հետ: Մնա՞ց Ադրբեջանին, ինչպես զենքի պահեստը՝ ամենատարբեր զինատեսակներով, թե՞, այդուհանդերձ, գոնե դրա տերը Հայաստանը դարձավ: «Ժողովուրդ» օրաթերթը հարցում էր ուղարկել ՀՀ փոխվարչապետ Տիգրան Խաչատրյանին՝ հասկանալու, թե ինչ ճակատագրի է արժանացել պետբյուջեն: «Լեռնային Ղարաբաղի պետբյուջեն Հայաստան տեղափոխվել չի կարող»,- պատասխանել էին մեզ:

ԱՄՆ-Ն ԱՇԽԱՏԱՆՔ Է ՍԿՍԵԼ

«Միացյալ Նահանգները եւ նրա դաշնակիցները լայնածավալ աշխատանք են սկսել ԱՊՀ երկրներում իրավիճակը խարխլելու ուղղությամբ, փորձում են ստեղծել քաղաքական ճգնաժամերի նախադրյալներ եւ անհրաժեշտ պայմաններ «գունավոր հեղափոխության» սցենարների իրականացման համար»,- ասել է Ռուսաստանի ԱԴԾ տնօրեն Ալեքսանդր Բորտնիկովը:

Նրանց նպատակը, ըստ ՌԴ ԱԴԾ ղեկավարի, իշխանությունը գրավելն է հիմնականում Տաջիկստանում, Ուզբեկստանում եւ Թուրքմենստանում՝ ներառյալ նրանց, այսպես կոչված, «Համաշխարհային խալիֆայությունում»:

ԱՄՆ-ի եւ Մեծ Բրիտանիայի հետախուզական ծառայություններն իրենց ջանքերը կենտրոնացրել են ԱՊՀ-ի հարավային սահմաններում իրավիճակի սրման վրա, դրա համար նրանք նախատեսում են օգտագործել Իրաքում, Սիրիայում եւ մի շարք միջազգային ահաբեկչական կազմակերպությունների զինյալներին:

«Մենք տեղեկություններ ունենք, որ Կենտրոնական Ասիայի հանրապետությունների քաղաքացիները, որոնք համալրել են ՏԿԱԻՆ (Տարածքային կառավարման եւ արտակարգ իրավիճակների նախարարության) շարքերը, հետախուզում են սահմանամերձ շրջանները եւ հայտնաբերում են խոցելի տարածքները դիվերսիոն խմբերի եւ ահաբեկչության միջոցների տեղափոխման համար: Բացի այդ, ԱՄՆ-ն եւ ՆԱՏՕ-ն «աֆղանական սպառնալիքի» դեմ պայքարի պատրվակով ակտիվորեն ծառայություններ են մատուցում Կենտրոնական Ասիայի երկրներին ռազմատեխնիկական համագործակցության եւ սահմանային անվտանգության ոլորտում՝ ԱՊՀ տարածքը ռազմական ճանապարհով «զարգացնելու» նպատակով»,- հավելել է նա:

Նրա խոսքով՝ հավաքական Արեւմուտքը, անտեսելով միջազգային իրավունքի հաստատված նորմերը, փնտրում է այլախոհների շանտաժի եւ ահաբեկման ամենաարդյունավետ ձեւերը՝ սեպ խրելով ԱՊՀ երկրների եւ նրանց հարեւանների միջեւ առկա բարեկամական հարաբերություններում:

«Արեւմուտքն իր հետախուզական ծառայությունների, ինչպես նաեւ կառավարվող ոչ կառավարական կազմակերպությունների եւ լրատվամիջոցների միջոցով աշխատում է մեր երկրներում էթնիկ եւ կրոնական ատելություն սերմանելու ուղղությամբ՝ ներշնչելով զինված հակամարտություններ՝ դրանով իսկ ստեղծելով քաղաքական ճգնաժամերի նախադրյալներ եւ դրա իրականացման համար անհրաժեշտ պայմաններ»,- հավելել է նա:

ՕՖԵԼՅԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ

«ՀԱՅԱՔՎԵ»-Ի ՆԱԽԱԳԻԾԸ ՄՈՒՏՔԱԳՐՎԵՑ ԱԺ

«ՀայաՔվե»-ի նախաձեռնող խմբի՝ Արցախի վերաբերյալ օրինագիծը երեկ՝ հոկտեմբերի 11-ին, ղաբտոնատես մուտքագրվեց ԱԺ: Նախագիծը 50.000 եւ ավելի ստորագրություն էր հավաքել, ԿԸՀ-ն հաստատել էր «ՀայաՔվե»-ի ներկայացրած ստորագրությունների վավերականությունը:

«ՀայաՔվե» նախաձեռնության օրենքի նախագիծը խիստ պատիժ է նախատեսում Լեռնային Ղարաբաղի ինքնորոշումից հրաժարվելու եւ Հայոց ցեղասպանության նշանակությունը նսեմացնելու համար:

Երեկ այն մուտքագրվեց ԱԺ, այնուհետեւ ԱԺ նախագահը կվերահասցեագրի այն համապատասխան հանձնաժողով, այս դեպքում՝ Պետական-իրավական:

Մեկ ամիս շրջանառության մեջ մնալուց հետո գլխադասային հանձնաժողովը դրական կամ բացասական եզրակացություն պետք է տա:

Անկախ եզրակացությունից՝ նախագիծն ընդգրկվելու է ԱԺ լիագումար նիստերի օրակարգ:

Նախագիծը ԱԺ-ում ներկայացնելու է «ՀայաՔվե» նախաձեռնության ներկայացուցիչը:

Հաշվի առնելով այսօր ստեղծված իրավիճակը, որ Արցախն ամբողջությամբ հայաթափված է, իսկ հունվարի 1-ին արդեն կդադարի գոյություն ունենալ՝ որքանով է նպատակահարմար եւ արդիական այս նախագիծը:

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում «ՀայաՔվե» նախաձեռնության անդամ Աննա Կոստանյանը, անդրադառնալով մեր այս դիտարկմանը, նշում է՝ թեեւ Արցախը կորսված է, բայց չպետք է հարմարվենք այս իրավիճակի հետ, այլ պետք է պահանջատիրություն ցուցաբերենք:

«Նախագիծը միայն Արցախին չէր վերաբերում, այլ նաեւ Ցեղասպանության պահանջատիրությանը: Երկու պահանջ էր ձեւակերպում՝ Արցախն Ադրբեջանի կամ որեւէ այլ պետության կազմում ճանաչելը, ինչպես նաեւ Ցեղասպանության պահանջատիրությունից հրաժարվելը քրեականացնել ՀՀ պաշտոնյաների համար:

Անկախ նրանից, թե ինչ իրավիճակ է այսօր, դա չի նշանակում, որ Արցախից ձեռքներս պետք է լվանանք: Ցանկացած բանական հայ, որը չի հարմարվելու Արցախի կորստի հետ, ձեռքերը չպետք է լվանա: Մենք՝ որպես ժողովուրդ, ունենք, չէ՞, պահանջատիրություն. եթե մենք անընդհատ համակերպվենք տարածքային կորստի հետ, ապա նոր տարածքներ կկորցնենք:

Արցախը հայաթափվել է, բայց մի շարք անպատասխան հարցեր կան, որոնց պետք է հետամուտ լինել: Ի վերջո, եկեք հիշենք, անկախ նրանից, թե Գրանադայում ՀՀ դե ֆակտո վարչապետը ինչ հայտարարության տակ է ստորագրել, դա վերջնական փաստաթուղթը չի Ադրբեջանի հետ ստորագրված:

Ինչ-ինչ պատճառներով Ադրբեջանի նախագահը չգնաց Գրանադա, մենք չգիտենք՝ նոր հանդիպում կայանալու է, թե ոչ, կամ ինչ փաստաթուղթ է ստորագրվելու, այսինքն՝ վերջնական փուլը այդ փաստաթղթի ստորագրման դեռ չի կայացել: Մենք չպետք է առաջնորդվենք նրանով, որ եթե այսօր Արցախը հայաթափվել է, ասենք՝ դե լավ, էլ ոչինչ չունենք անելու. պետք է շարունակենք մեր նպատակները իրագործել. դրանք շատ հստակ են՝ Արցախը Հայաստանի հետ վերամիավորվելը, ինչպես նաեւ Ցեղասպանության պահանջատիրությունը: Կարծում եմ՝ այստեղ մենք անելու շատ բան ունենք եւ պետք է ավարտին հասցնենք այս նախագիծը, պետք է պարտադրել ՔՊ խմբակցության պատգամավորներին ընդունել նախագիծը, իսկ հաջորդ քայլերը ցույց կտա ժամանակը. հիմա սպասում ենք ԱԺ որոշմանը»,-ասաց Կոստանյանը:

ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԱԴՐԲԵՋԱՆԸ ԱՐՁԱԳԱՆՔԵԼ Է

Ի պատասխան հոկտեմբերի 10-ի՝ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինանի հարցազրույցի՝ Ադրբեջանի արտաքին գործերի նախարարությունը հաղորդագրություն է տարածել: «Հոկտեմբերի 10-ին Առաջին ալիքին տված հարցազրույցում Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի կողմից Ադրբեջանի հասցեին հնչած որոշ մեղադրանքներ հստակ ցույց են տալիս, որ հայկական կողմը չի հրաժարվում քաղաքական շահարկումներից եւ խեղաթյուրված մեկնաբանություններից»,- ասվում է Ադրբեջանի արտգործնախարարության հաղորդագրության մեջ՝կապված Առաջին ալիքին տված հարցազրույցի ժամանակ վարչապետ Նիկոլ Փաշինյանի հնչեցրած մեկնաբանությունների հետ:

«Ցանկանում ենք հիշեցնել հայկական կողմին, որը պնդում է, թե Գրանադայում եվրոպական քաղաքական համայնքի նիստին մասնակցելուց Ադրբեջանի իբր հրաժարվելու պատճառը Ադրբեջանի կողմից խաղաղությանը խոչընդոտելն է, չի համապատասխանում իրականությանը, այլ, հակառակը, անցյալ տարվա դեկտեմբերից Հայաստանը խուսափում է տարբեր հարթակներում խոսել «Խաղաղության պայմանագրի» շուրջ»:

Հաղորդագրության վերջում Ադրբեջանը նշել է, որ խաղաղություն նախաձեռնողը իրենք են, այլ ոչ թե Հայաստանի Հանրապետությունը, մեղադրանքները ավարտելով՝խոսել են նաեւ այն մասին, որ Ադրբեջանին բոլորը գիտեն իբրեւ խաղաղ սկզբունքներ կրող երկրի:

Հայկական կողմը դեռ չի արձագանքել այս մեկնաբանությանը:

ԿՎԵՐՑՆԻ՞ ՄԱՆԴԱՏԸ

Երեւանի ավագանին հոկտեմբերի 10-ին քաղաքապետ ընտրեց: Տիգրան Ավինյանը, որը սեպտեմբերի 17-ին կայացած ավագանու ընտրությունների արդյունքում 33% ձայն էր հավաքել, ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» եւ «Հանրապետություն» կուսակցությունների կողմից ընտրվեց քաղաքապետ:

«Հանրային ձայն» կուսակցությունն էլ էր եկել եւ քվորում ապահովել, որ նիստը կայանա: Իսկ ի՞նչ են մտադիր անել ընդդիմադիր Հայկ Մարությանի «Ազգային առաջընթաց» կուսակցությունը եւ Անդրանիկ Թեւանյանի «Մայր Հայաստան» դաշինքը:

«Ժողովուրդ» օրաթերթին «Ազգային առաջընթաց» կուսակցության ղեկավար Հայկ Գրիգորյանն ասաց, որ իրենց խմբակցությունը, այդ թվում՝ Հայկ Մարությանը, վերցնելու են մանդատները եւ ավագանիում աշխատելու են իշխանության հետ:

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում «Մայր Հայաստան» դաշինքի առաջնորդ Անդրանիկ Թեւանյանն ասաց, որ դեռ չեն քննարկել՝մանդատները վերցնելու են, թե չէ: «Հիմա ավելի կարեւոր հարցեր կան քննարկելու»,- ասաց նա:

ԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ Է ԵԿԵԼ

Գեղարքունիքի մարզի Սոթք բնակավայրի հատվածում տեղակայված դիրքերի ուղղությամբ թշնամու կրակոցից վիրավորված եւ բարդ վիրահատության ենթարկված Նարեկ Պողոսյանը գիտակցության է եկել:

«Բժիշկների գործադրած ջանքերի արդյունքում բուժման ակտիվ փուլն ավարտվել է, առողջական վիճակը գնահատվում է բավարար, այժմ վերականգնողական բուժման կարիք ունի»,- այս մասին «Ժողովուրդ» օրաթերթին հայտեցին ՊՆ-ից:

ՆԱԽԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ՝ ՎՐԵԺԽՆԴՐՈՒԹՅԱՆ ՇԱՐԺԱՌԻԹՈՎ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ՀՀ ոստիկանության կոմիտեի հատկապես կարևոր գործերի քննության գլխավոր վարչության մարդու դեմ ուղղված հանցագործությունների քննության վարչությունում ավարտվել է Երևան քաղաքի բնակչի կողմից Արտաշատ քաղաքի 31-ամյա բնակչի նկատմամբ սպանության փորձ կատարելու, ատրճանակի կերպով հրազեն ձեռք բերելու, պահելու, կրելու դեպքի առթիվ նախաձեռնված քրեական վարույթի նախաքննությունը:

2022թ. մարտի 28-ին՝ ժամը 20:50-ին, «Արտաշատի բժշկական կենտրոն»-ից ահազանգ է ստացվել այն մասին, որ նույն օրը հրազենային վնասվածքներով իրենց մոտ բուժօգնության է տեղափոխվել Արտաշատ քաղաքի բնակիչ:

Ահազանգով անմիջապես դեպքի վայր մեկնած քննչական-օպերատիվ խումբը ձեռնարկել է քննչական եւ ապացուցողական անհետաձգելի գործողություններ. կատարվել է դեպքի վայրի զննություն, որի ընթացքում հայտնաբերվել են արնանման հետքեր, 9 մմ տրամաչափի կրակված պարկուճներ եւ կրակված գնդակ:

Նախաձեռնված քրեական վարույթի շրջանակներում իրականացված վարութային գործողությունների արդյունքում հիմնավորվել է, որ Երեւան քաղաքի 31-ամյա տղամարդը, դեպքից օրեր առաջ Արտաշատ քաղաքում հետիոտնային անցումով անցնելիս արժանանալով այդ պահին ավտոմեքենայով երթեւեկող տուժողի կողմից իրեն արված դիտողությանը եւ ձայնային ազդանշանին, վիճաբանել է նրա հետ, որի ընթացքում Արտաշատի բնակիչը հայհոյել է 31-ամյա տղամարդուն եւ թքել նրա ուղղությամբ:

Կատարվածից վրդովված եւ չհանդուրժելով իրեն հասցրած վիրավորանքը՝ վերջինս մտադրվել է սպանության եղանակով վրեժխնդիր լինել:

Իր հանցավոր մտադրությունն իրականացնելու վճռականությամբ 31-ամյա տղամարդը, ապօրինի կերպով ձեռք բերած եւ իր մոտ պահվող 9մմ տրամաչափի լիցքավորված ակոսափող ատրճանակով զինված, տարբեր օրերի մեկնել է Արտաշատ քաղաք, հայտնաբերել է տուժողին՝ պլանավորելով եւ որոշելով սպանությունն անվրեպ իրականացնելու նպաստավոր ժամանակն ու վայրը:

Մի քանի օր հետեւելով տուժողին՝ ի վերջո 2022թ. մարտի 28-ին 31-ամյա տղամարդը հերթական անգամ մեկնել է Արտաշատի բնակչի բնակության վայրի մոտ, դարանակալել ու սպասել է նրա ժամանելուն: Ժամը 20:40-ի սահմաններում տեսնելով, որ Արտաշատի բնակիչը քայլելով մոտենում է՝ վերջինիս ապօրինաբար կյանքից զրկելու դիտավորությամբ թիկունքից անսպասելի մոտեցել է նրան եւ լիցքավորված ատրճանակը պահել է նրա գլխին: Տղամարդը, հասկանալով, որ ցանկանում է կրակել իր վրա, պաշտպանվելու նպատակով ձեռքով հարվածել է 31-ամյա տղամարդու ձեռքին՝ փորձելով գետնին գցել ատրճանակը, սակայն չի կարողացել, որից հետո քաշքշուկ է սկսվել նրանց միջեւ: Այդ ընթացքում 31-ամյա տղամարդը կրակել է տուժողի դեմքի՝ բերանի հատվածին, ապա՝ ձախ ձեռքին, այնուհետեւ, մի քանի մետր հեռանալով, շարունակել է կրակոցներ արձակել՝ ցանկանալով խոցել վերջինիս կյանքի համար կենսական կարեւոր նշանակություն ունեցող հատվածները: Կրակոցներից մեկը դիպել է տուժողի որովայնին՝ պատճառելով կյանքի համար վտանգավոր մարմնական վնասվածքներ:

Դեպքի հաջորդ օրը 31-ամյա տղամարդը լքել է ՀՀ տարածքը: Երեւան քաղաքի 31-ամյա բնակիչը քրեական վարույթով ներգրավվել է որպես մեղադրյալ՝ սպանության փորձի եւ ապօրինի կերպով հրազեն ձեռք բերելու, պահելու կրելու համար:

Հաշվի առնելով, որ մեղադրյալը թաքնվում է քննությունից՝ նրա նկատմամբ հայտարարվել է հետախուզում, իսկ որպես խափանման միջոց կիրառվել է կալանավորումը:

Դեպքից շատ չանցած՝ վերջինս ձերբակալվել է Վրաստանի Հանրապետության իրավապահ մարմինների կողմից, 2022թ. դեկտեմբերի 30-ին տեղափոխվել է ՀՀ եւ ներկայացվել վարույթն իրականացնող մարմին: Նրան ներկայացվել է մեղադրանք՝ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 1-ին մասով եւ 235-րդ հոդվածի 1-ին մասով (համապատասխանում է գործող ՀՀ քրեական օրենսգրքի 44-155-րդ հոդվածի 1-ին մաս եւ 335-րդ հոդվածի 1-ին): Դատարանը հաստատել է նրան կալանքի տակ պահելու ներկայացված միջնորդությունը, որը հետագայում, դատարանի որոշմամբ, փոխարինվել է տնային կալանքով եւ գրավով՝ 5.000.000 ՀՀ դրամի չափով:

Նախաքննությունն ավարտվել է, եւ վարույթի նյութերը՝ մեղադրական եզրակացությամբ, ուղարկվել են դատարան:

Ապօրինի կերպով հրազեն ձեռք բերելու մասով նախաքննությունը շարունակվում է: Ձեռնարկվում են միջոցառումներ՝ դրա ձեռք բերման աղբյուրը պարզելու ուղղությամբ:

ՈՒՇԱԳՐԱՎ

ՕՏԱՐՎԵՑ ՕՐԵՆՔԻ ԽԱԽՏՄԱՄԲ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Երեւան քաղաքի դատախազությունում պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայց հարուցելու լիազորության շրջանակում ուսումնասիրվել է Երեւան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Մովսես Խորենացի փողոցի եւ նույն փողոցի 1-ին փակուղու հատման մասում գտնվող հողամասի կադաստրային գործը:

Ուսումնասիրությամբ պարզվել է, որ Երեւանի քաղաքապետարանի պաշտոնատար անձինք, առերեւույթ խախտելով Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետի պահանջները (պետության եւ համայնքների սեփականություն հանդիսացող հողամասերի ուղղակի վաճառքը կատարվում է օրենքներով եւ պայմանագրերով գնման նախապատվության իրավունք ունեցող անձանց), Մ.Խորենացու փողոցի եւ նույն փողոցի 1-ին փակուղու հատման հասցեում հյուրանոցային համալիր կառուցելու նպատակով «Բյուրակն» ՍՊ ընկերությանը տրամադրել են 2707 քմ մակերեսով հողատարածք: Կնքված վարձակալության պայմանագրով սահմանվել է պարտադիր պայման, ըստ որի՝ պայմանագրային պարտավորությունները կատարելու դեպքում հողատարածքը գնման նախապատվության իրավունքով կվաճառվի վարձակալին, սակայն, առանց վերոնշյալ պարտավորության կատարման, այսինքն՝ առանց հյուրանոցային համալիրի կառուցման, վարձակալն անհիմն օժտվել է գնման նախապատվության իրավունքով, եւ վերոնշյալ հողատարածքը 2006 թվականի հոկտեմբերի 27-ին ուղղակի վաճառքով օտարվել է «Բյուրակն» ՍՊ ընկերությանը:

Երեւանի քաղաքապետարանի պաշտոնատար անձինք շինարարության թույլտվության ժամկետի ավարտից, ինչպես նաեւ կառուցապատման համար հողամասի տրամադրման օրվանից երեք տարի հետո կառուցապատողի կողմից հողամասն ամբողջությամբ կամ դրա մասը չօգտագործելու պայմաններում միջոցներ չեն ձեռնարկել հողամասի նկատմամբ իրավունքները հարկադիր կարգով դադարեցնելու ուղղությամբ, ինչի արդյունքում պետության (համայնքի) օրինական շահերին պատճառվել է էական վնաս:

Նկատի ունենալով, որ ուսումնասիրության ընթացքում հայտնաբերվել են Երեւանի քաղաքապետարանի պաշտոնատար անձանց կողմից առերեւույթ հանցանք կատարելու դեպքեր՝ դատախազը հանցանքի մասին հաղորդում է ներկայացրել Հակակոռուպցիոն կոմիտե:

2023 թվականի հոկտեմբերի 4-ին Հակակոռուպցիոն կոմիտեում նախաձեռնվել է քրեական վարույթ՝ 18.04.2003 թվականին ընդունված Քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով (պաշտոնեական լիազորությունները չարաշահելը) եւ 315-րդ հոդվածի 1-ին մասով (պաշտոնեական անփութություն):

ԿԱՐԵՎՈՐ

ԴԱՆԱԿԱՀԱՐԵԼ Է ՄՈՐՆ ՈՒ ՔՐՈՋԸ

Հոկտեմբերի 6-ին արտակարգ դեպք է տեղի ունեցել Երեւանում. Ժամը 17:40-ի սահմաններում «Արմենիա» բժշկական կենտրոնից ՀՀ ՆԳՆ ոստիկանության Մաշտոցի բաժին ահազանգ է ստացվել, որ «զույգ վերին վերջույթների կտրած վերքեր» ախտորոշմամբ իրենց մոտ է տեղափոխվել մի քաղաքացի:

Հիվանդանոցում բժիշկները ոստիկաններին հայտնել են, որ վիրավորներն ի վիճակի չեն կատարվածի մասին բացատրություն տալու, քանի որ գտնվում են վիրահատարանում: Մինչ բժիշկները պայքարում էին վիրավորների կյանքի համար, ոստիկանները պարզել են, որ նրանք են Երեւանի բնակիչներ 79-ամյա Անահիտ Կ.-ն եւ 45-ամյա Լուսինե Կ.-ն:

Մաշտոցի ոստիկանները պարզել են նաեւ, որ նրանց դանակահարել է Երեւանի բնակիչ 48-ամյա Էլեն Կ.-ն:

Վիրավորները Էլեն Կ.-ի մայրն ու քույրն են:

Դեպքի փաստով ոստիկանության Մաշտոցի բաժնում փաստաթղթեր են ձեւակերպվել, որոնք փոխանցվել են Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության Աջափնյակ եւ Դավիթաշեն վարչական շրջանների քննչական բաժին:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հոկտեմբերի 10-ից 11-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 65 դեպք, որոնցից 3-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՄԵԾԱՔԱՆԱԿ ՊԱՐԳԵՎԱՎՃԱՐՆԵՐ

Տավուշի մարզպետարանից հայտնել են, որ Տավուշի մարզպետի աշխատակազմի թվով 73 աշխատակիցներ 2023 թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ մարզպետի աշխատակազմի պահպանման ծախսերով պարգեւատրումների հոդվածով նախատեսված միջոցներից սահմանված կարգով ստացել են 55 միլիոն 769 հազար 800 դրամի պարգեւատրում: Թե ինչ աշխատանքային նվաճումների համար են մարզպետարանի պաշտոնյաները պետական բյուջեից պարգեւատրվել, հայտնի չէ:

ԻՋԵՎԱՆԻ ԲԿ–Ի ՎԻՃԱԿԸ

Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին հարցում ենք ուղարկել՝նշելով, որ Իջեւանի ԲԿ-ի բազմաթիվ բուժառուներ «Ժողովուրդ» օրաթերթին դժգոհել են, որ այդ ԲԿ-ի հիվանդասենյակների պատերից կախված են հեռուստացույցի տակդիրներ, սակայն հիվանդասենյակներում հեռուստացույցներ չկան, հիվանդասենյակներում հիվանդները խեղդվում են սենյակների ծանր օդից, ԲԿ-ի զուգարաններում տիրող ծանր հոտից, այդ ԲԿ-ի շտապ օգնության ծառայությունը, բնակիչների գիշերային կանչերին արձագանքելով, հիվանդի հարազատներին ասում է, որ հիվանդին տաքսիով հիվանդանոց տանեն: Մարզպետին հարցրել եմ, թե մարզպետարանն ինչ միջոցներ է ձեռնարկել այս թերությունները վերացնելու համար: Մարզպետարանից ստացված պատասխանում գրված է. ««Իջեւանի ԲԿ» ՓԲԸ-ի հեռուստացույցների տակդիրները պատերից արդեն իսկ հանված են, քանի որ վերանորոգման նպատակով հանված հեռուստացույցները չեն վերանորոգվել ֆինանսական աննպատակահարմարության պատճառով: Հիվանդասենյակները գերազանց վերանորոգված են, ամբողջ հիվանդանոցում գործում է կենտրոնացված օդափոխության համակարգ, եւ ձեր պնդումը «ծանր օդից հիվանդների խեղդվելու մասին» չի համապատասխանում իրականությանը: Շտապ օգնության մեքենայի կանչի իրականացման ժամանակ 2-րդ կանչի դեպքում արագ կերպով կազմակերպվում է կանչի սպասարկում այլ բրիգադի կողմից»: Մարզպետն անտեսել է Իջեւանի ԲԿ-ի զուգարանների ծանր հոտի մասին հարցը:

ՈՉ ՄԵԿԻՆ ՉԵՆ ՏՈՒԳԱՆԵԼ

Իջեւանի կենտրոնով հոսող Աղստեւը շատ աղտոտված է, քանզի գետի ափին գտնվող սննդի ու առեւտրի օբյեկտներից կենցաղային աղբը նետում են գետ: Համայնքի ղեկավար Արթուր Ճաղարյանին տեղեկատվական հարցում ենք արել՝ հարցնելով, թե համայնքապետարանը այս տարի գետն աղտոտած քանի հոգու է տուգանել: Համայնքապետը պատասխանել է.«Աղստեւ գետն աղտոտելու համար համայնքապետարանն այս տարի տուգանքներ չի կիրառել, քանի որ հնարավոր չէր այդ պահին արձանագրել արարքը հետագայում վարչական տույժ կրառելու համար»: Անհամոզիչ բացատրություն է, քանզի գետի ափերին եւ կամուրջներին կանգնածներին տեսանելի է, թե գետամերձ օբյեկտներից ոնց են պարբերաբար աղբ թափում Աղստեւ:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԾՐԱԳԻՐ

ԱՐՑԱԽԱՀԱՅ ԳՈՐԾԱՐԱՐՆԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Հայաստանի էկոնոմիկայի նախարարությունը Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված գործարարների համար առաջարկներ ունի, ծրագրեր են մշակել ու ներկայացրել կառավարություն: Նրանց համար հասանելի կլինեն ինչպես արդեն իսկ գործող պետական աջակցության ծրագրերը, այնպես էլ կլինեն նոր ծրագրեր, որոնց շրջանակում բռնի տեղահանվածների համար կգործեն արտոնյալ պայմաններ: «Ժողովուրդ» օրաթերթի հաղորդմամբ՝ հոկտեմբերի 9-ին նախարարությունում հանդիպում է եղել Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված գործարարների հետ խնդիրներն ու գաղափարները քննարկելու նպատակով:

Գործարարները բարձրացրել են մի շարք խնդիրներ, որոնց մի մասը կապված են եղել նաեւ տեխնիկական հարցերի հետ: Եղել են հարցեր՝ հարկային համակարգերի փոխգործելիության հետ կապված եւ այլն: Գեւորգյանի հավաստիացմամբ՝ դրանք լուծելի են: Բռնի տեղահանված գործարարները հետաքրքրվել են, թե էկոնոմիկայի նախարարությունն ինչ ծրագրեր է իրականացնում, որոնցից կարելի է օգտվել:

«Ծրագրերը մի քանիսն են: Այս պահին մասնավոր հատվածի զարգացման մեր ամենաընդարձակ ծրագիրը տնտեսության արդիականացման միջոցառումն է: Միջոցառման շրջանակում արդեն իսկ կնքվել է 2500-ից ավելի վարկային պայմանագիր, եւ 400 մլն դոլարից ավելի միջոցներ արտոնյալ տոկոսներով հասանելի են դարձել Հայաստանի քաղաքացիներին: Ծրագիրը գործել է նաեւ Լեռնային Ղարաբաղի տարածքում: Բռնի տեղահանումից հետո, բնականաբար, այն գործարարները, որոնք կցանկանան օգտվել ծրագրից, նույնպես դրա հնարավորություն կունենան»,- վստահեցրեց փոխնախարարը:

Ծրագրի շրջանակում ընկերությունները մինչեւ 10 մլրդ դրամ սահմանաչափով կարող են ձեռք բերել մեքենասարքավորումներ, որոնց տոկոսագումարները պետությունը սուբսիդավորում է:

Նախատեսվում են նաեւ նոր ծրագրեր. դրանք կլինեն ոչ միայն բռնի տեղահանվածների համար, այլեւ Հայաստանում առհասարակ մասնավոր հատվածի համար: «Իսկ բռնի տեղահանվածների համար որոշակի արտոնյալ պայմաններ կգործեն: Դրանք այն առաջարկներն են, որ դեռ նախորդ շաբաթ մշակել եւ ներկայացրել ենք կառավարություն»,-ասաց փոխնախարարը:

Էկոնոմիկայի նախարարությունում հանդիպմանը մասնակցած գործարարները եղել են հիմնականում շինարարության, մշակող արդյունաբերության եւ այլ ոլորտներից: «Կարծում եմ, որ այն ծրագրերը, որոնք մենք ուզում ենք իրականացնել, հիմնական մասի խնդիրները կկարողանան սահուն կերպով լուծել»,-ասաց նա՝ հավելելով, որ հաշվի են առել նրանց ներկայացրած որոշակի առաջարկները եւս:

Գեւորգյանի խոսքով՝ կառավարությանը ներկայացված ծրագրերից մեկը վերաբերում է զբաղվածության ապահովմանը: Այն մարդիկ, որոնք տարբեր ժամանակաշրջաններում, օրինակ, գուցե զբաղվել են ապրանքների, ծառայությունների առեւտրով, հնարավորություն կստանան Հայաստանում որպես աշխատուժ ներգրավվել տարբեր գործարարների մոտ, որոնք այս պահին աշխատուժի մեծ սղություն ունեն:

ԱՆՑՈՒԴԱՐՁ

ԻՐԱՎԻՃԱԿԸ՝ ԻՍՐԱՅԵԼՈՒՄ

Իսրայելի վրա «ՀԱՄԱՍ»-ի հարձակման զոհերի թիվը հասել է 1,2 հազարի, վիրավորվել է ավելի քան 2,4 հազարը, որոնցից 544-ը դեռ մնում են հիվանդանոցներում. հաղորդում է Հրեական պետության առողջապահության նախարարությունը:

Կյանքից զրկվածների թիվը շարունակում է աճել, քանի որ ոստիկանությունը եւ կամավորները ուսումնասիրում են ավելի ու ավելի շատ տարածքներ եւ բնակավայրեր, որտեղ ահաբեկիչները ռազմական գործողություններ են կատարել անցյալ շաբաթ օրը՝հոկտեմբերի 7-ին: Կան վայրեր, որտեղ նրանք հայտնաբերել են խոշտանգումների եւ զանգվածային մահապատիժների հետքեր, որոշ վայրերում մահացածների նույնականացումը չափազանց դժվար է եղել դիակները այրված լինելու պատճառով:

Մահացածների թվում կան նաեւ ազգությամբ ռուսներ: Հիշեցնենք, որ ահաբեկիչների գործողությունները խիստ մտահոգում էին Ռուսաստանին, քանի որ ամեն կերպ ցանկանում էր իմանալ՝ արդյոք պատանդների կամ մահացածների թվում ռուսներ կան: Արդյունքում պարզ դարձավ, որ չորս ռուսաստանցի սպանվել են զինյալների կողմից, եւս ինը անհայտ կորած են համարվում:

Հոսպիտալացվածներից երեքի վիճակը ծանր է, 126-ը՝ ծանր, 192-ը՝ միջին ծանրության վնասվածքներով:

Վերջին հաշվարկների համաձայն՝ գրոհայինների կողմից գերեվարվել է 130-ից 150 մարդ, այդ թվում՝ օտարերկրյա քաղաքացիներ եւ երեխաներ:

Գազայի հատվածի վրա պատասխան հրթիռային եւ ռմբակոծությունների ժամանակ առնվազն 950 պաղեստինցի է զոհվել, ավելի քան 5 հազար մարդ վիրավորվել է, մինչդեռ Իսրայելի ռազմաօդային ուժերը շարունակում են ոչնչացնել շրջափակված անկլավի ենթակառուցվածքը, որտեղ կան լույսի եւ ջրի լուրջ ընդհատումներ:

Հավելենք, որ Իսրայելի պաշտպանության բանակը հայտարարել է, որ Լիբանանից հակատանկային հրթիռ է արձակվել Արաբ ալ Արամշե քաղաքի մերձակայքում տեղակայված զինվորական դիրքի ուղղությամբ: Իսրայելական դիրքի հրթիռակոծության մասին հայտնել է նաեւ «Հեզբոլլահ» իսլամիստական խմբավորումը:

Աղբյուրը նշում է, որ այժմ Իսրայելը, ի պատասխան իր դիրքի հրթիռակոծության, գնդակոծում է Լիբանանի հարավային որոշ հատվածներ:

Լիբանանի պետական լրատվական գործակալությունը հայտնել է, որ Իսրայելը ռմբակոծում է Դհայրա քաղաքը, իսկ «Յարին գյուղը գնդակոծվում է ֆոսֆորային արկերով»:

Հոկտեմբերի 9-ին Իսրայելը հայտնել էր, որ Լիբանանի տարածքից Իսրայել են ներթափանցել «ահաբեկիչներ», որոնք սպանվել են իսրայելցի զինվորների կողմից: Այս բախումների ընթացքում իսրայելցի 3 զինվոր էր զոհվել: «Պաղեստինի իսլամական ջիհադ» շարժումն իր հերթին հաստատել է, որ իսրայելցի զինվորների կողմից սպանված զինյալները եղել են իր անդամները:

Հոկտեմբերի 10-ին եւս բախումներ են տեղի ունեցել «Հեզբոլլահ»-ի եւ իսրայելցի զինվորականների միջեւ Լիբանանի եւ Իսրայելի սահմանին:

ՕՖԵԼՅԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

● Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 17 ճՏՊ. 2 մարդ զոհվել է, 26-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ՑՈՒՑԱՆԻՇ

ԶԲՈՍԱՇՐՋԻԿՆԵՐԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ



Ընթացիկ տարվա սեպտեմբերին Հայաստան է այցելել 260 հազար զբոսաշրջիկ: Այս ցուցանիշն ավելին է, քան 2022 եւ 2019 թվականների սեպտեմբեր ամիսների տվյալները: 2022 թվականի սեպտեմբերին գրանցվել է 198 հազար այցելություն, 2019 թվականի սեպտեմբերին՝ 221 հազար:

Ընթացիկ տարվա 9 ամիսներին Հայաստանը գրանցել է 1 միլիոն 850 հազար զբոսաշրջային այցելություն: 2019 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ՝ աճը կազմել է 25 տոկոս:

Հայաստան եկած զբոսաշրջային ցուցանիշի կառուցվածքում առաջին տեղում Ռուսաստանն է՝ 51 տոկոս, երկրորդ տեղում Վրաստանն է՝ 10 տոկոս, երրորդ տեղում Իրանն է՝ 6 տոկոս: Այս մասին հայտնել է ՀՀ ԷՆ զբոսաշրջության կոմիտեի նախագահ Սիսիան Պողոսեանը: Նա նաեւ տեղեկացրեց, որ ակտիվություն նկատվում է Ֆրանսիայից, Գերմանիայից, Էմիրություններից:

«Մենք ակտիվ աշխատում ենք տարբեր հարթակներում Հայաստանը ներկայացնելու ուղղությամբ: Նախորդ շաբաթ Իտալիայում էինք՝ մասնակցելու զբոսաշրջային ցուցահանդեսին: Իտալիան մեզ համար նոր ուղղություն է, գիտեք, որ ուղիղ չվերթեր կան տարբեր քաղաքներից դեպի Երեւան, հիմա մենք թիրախային աշխատանք ենք կատարում իտալական շուկայում՝ գովազդելու Հայաստանը: Այս ընթացքում եղել ենք Ֆրանսիայում 12 տուրօպերատորի հետ: Տեսնում ենք, որ Հայաստանի նկատմամբ բավական հետաքրքրություն կա Ֆրանսիայից: Նոյեմբերին էլ մեկնելու ենք Լոնդոն, կրկին՝ մեծ խմբով, ներկա ենք լինելու սպասվող միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսին: Նման խոշոր միջոցառումներին սովորաբար ներկայացնում ենք Հայաստանի պատմամշակութային վայրերը, արշավային, արկածային տուրիզմի հնարավորությունները, խոհանոցը»,- ասաց Սիսիան Պողոսեանը:

Նրա խոսքով՝ վերջին տարիներին Հայաստանի զբոսաշրջային պորտֆոլիոները դարձել են բավականին բազմազան: Յուրաքանչյուր երկրում, կախված տեղի բնակիչների նախասիրություններից, կա հնարավորություն ներկայացնելու ամենատարբեր տուրիստական փաթեթներ:

ՏԵՂԱՎՈՐՎԵԼ ԵՆ

ԱՐՑԱԽԱՀԱՅԵՐԻ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ ԼՂ-ից բռնի տեղահանված 12 167 երեխա ընդգրկված է ՀՀ կրթական հաստատություններում: Այդ մասին ասուլիսի ժամանակ հայտարարեց ՀՀ վարչապետի մամուլի քարտուղար Նազելի Բաղդասարյանը:

Ըստ մարզերի բաշխվածությունն ունի հետեւյալ պատկերը՝ Սյունիքում՝ 504, Վայոց ձորում՝ 243, Գեղարքունիքում՝ 586, Արարատում՝ 1710, Կոտայքում՝ 2124, Արագածոտնում՝ 564, Արմավիրում՝ 1045, Շիրակում՝ 486, Լոռիում՝ 702, Տավուշում՝ 364, Երեւանում՝ 3839:

Նա նաեւ նշեց, որ ԼՂ-ից բռնի տեղահանված շուրջ 30 հազար անչափահաս արդեն իսկ հաշվառված է համակարգում 100 հազարական դրամները ստանալու համար, նրանցից 21690-ի դիմումներն արդեն իսկ մուտքագրված են, եւ ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության կողմից այժմ դրանք մշակման փուլում են, առաջիկա օրերի ընթացքում նրանք կտեղեկացվեն՝ արդյոք ներկայացված դիմումները բավարարվել են:

Հիշեցնենք, որ քոլեջների եւ ուսումնարանների ղեկավարներին Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ուսանողների կրթության կազմակերպման նպատակով նախարարությունը շրջաբերական գրություն էր ուղարկել նաեւ նախորդ շաբաթ: Ըստ այդմ՝ հանձնարարվել էր բռնի տեղահանված մեր հայրենակիցների կրթության շարունակությունը կազմակերպել ՀՀ-ում ուսանողի բնակության վայրի ամենամոտ (համայնք կամ մարզ) ուսումնական հաստատությունում իր ուսումնառած մասնագիտությամբ՝ տվյալ մասնագիտության համար լիցենզիայով հատկացված տեղերի թիվը չգերազանցելու պայմանով: Լիցենզիայով հատկացված տեղերի թիվը գերազանցելու դեպքում ուսումնական հաստատության կողմից պետք է խորհուրդ տրվի համայնքի կամ մարզի այլ հաստատություն, որտեղ առկա է ուսանողի ուսումնառած մասնագիտությամբ թափուր տեղ: Ուսանողի բնակության վայրի ամենամոտ ուսումնական հաստատությունում լիցենզիայով հատկացված տեղերը գերազանցելու դեպքում ուսանողն իր ցանկությամբ կարող է դիմել հարակից մասնագիտությամբ՝ պահպանելով ՀՀ կրթության եւ գիտության նախարարի 2011 թվականի դեկտեմբերի 5-ի N 1278-Ն հրամանի հավելվածով հաստատված «ՀՀ նախնական մասնագիտական (արհեստագործական) եւ միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում ուսումնառությունն անավարտ թողած անձի ուսանողական իրավունքի վերականգնման» կարգի պահանջները:

Ուսանողական իրավունքի վերականգնման մերժման հիմք չի կարող հանդիսանալ անհրաժեշտ փաստաթղթերի բացակայությունը: Ուսանողի դիմումն ընդունելուց հետո անհրաժեշտ է նրան թույլատրել մասնակցելու ուսումնական գործընթացին եւ հնարավորինս սեղմ ժամկետում դիմել Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարություն վերականգնման համաձայնություն ստանալու համար: ԼՂ-ում ընդհատված կրթության իրավունքի վերականգնման դեպքում պետական քոլեջներում եւ ուսումնարաններում կրթության կազմակերպման նպատակով նախատեսվում է պետության կողմից ուսման վարձի փոխհատուցում:

ՖԻՆԱՆՍՆԵՐ

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ՝ ԱՄԵՆԱԲԱՐՁՐԸ ⇨

Արժույթի միջազգային հիմնադրամը կանխատեսում է, որ 2023 թվականին Հայաստանի տնտեսական աճը (ՀՆԱ) կկազմի 7 տոկոս:

«Ժողովուրդ» օրաթերթն այս մասին տեղեկանում է Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) «Համաշխարհային տնտեսության հեռանկարներ» նոր զեկույցից:

Ընդ որում՝ նախորդ՝ ապրիլին հրապարակված կանխատեսման համեմատ՝ ԱՄՀ-ն բարձրացրել է Հայաստանի տնտեսական աճի կանխատեսումը. նախորդ զեկույցում 2023-ին Հայաստանում կանխատեսում էր 5.5 տոկոս տնտեսական աճ:

Վերջին կանխատեսման համաձայն՝ Արժույթի միջազգային հիմնադրամը 2024-ին Հայաստանում կանխատեսում է 5 տոկոս տնտեսական աճ:

ԱՄՀ-ն, ընդ որում, տարածաշրջանում տնտեսական աճի ամենաբարձր կանխատեսումն արել է հենց Հայաստանի համար: Վրաստանի համար կանխատեսումը 2023-ին 6.2 տոկոս է, 2024-ի համար՝ 4.8 տոկոս: Արժույթի միջազգային հիմնադրամը թե՛ այս տարի, թե՛ 2024-ին Ադրբեջանում կանխատեսում է ընդամենը 2.5 տոկոս տնտեսական աճ:

Իսկ 2023-ին Թուրքիայի համար կանխատեսումը 4 տոկոս է, 2024-ին՝ 3 տոկոս: Իրանում ԱՄՀ-ն 2023-ին կանխատեսում է 3 տոկոս տնտեսական աճ, 2024-ին՝ 2.5 տոկոս:

Հայաստանի Հանրապետության 2023թ. պետական բյուջեի մասին օրենքի նախագծի հիմքում դրված է եղել 7 տոկոս տնտեսական աճի կանխատեսումը: Հայաստանի կենտրոնական բանկի՝ ՀՀ տնտեսական աճի վերջին՝ սեպտեմբերին արած կանխատեսումը 7.2 տոկոս է:

«ԱՐՑԱԽԲԱՆԿ»-Ը ՀԱՅՏԱՐԱՐԵՑ

«Արցախբանկ»-ը հայտարարություն է տարածել, որում, մասնավորապես, ասվում է, որ նպատակ ունենալով որոշակի չափով աջակցել 2023թ. սեպտեմբերի 19-ին Ադրբեջանի կողմից Արցախի դեմ սանձազերծված ռազմական գործողությունների հետեւանքով ֆինանսական ծանր կացության մեջ հայտնված Արցախից տեղահանված մեր հայրենակիցներին՝ բանկը վերադարձնում է Արցախում տրամադրված ոսկու գրավով վարկերի համար գրավադրված ոսկյա իրերը առանց հաճախորդների կողմից վարկային պարտավորությունների մարման:

«Տեղեկացնում ենք, որ բանկը Ստեփանակերտ քաղաքում արդեն իսկ 400-ից ավելի վարկառուների վերադարձրել է վերջիններիս կողմից գրավադրած ոսկյա իրերը, ինչպես նաեւ նախատեսում է 500-ից ավելի հաճախորդների եւս վերադարձնել»:

● «Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԿԱՐԾԻՔ

ՀԱՆԴԻՊԵՑԻՆ

ԾԱՆՐՈՐԴՆԵՐՆ ՈՒ ԸՄԲԻՇՆԵՐԸ՝ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Հայաստանի ծանրամարտի եւ ըմբշամարտի ֆեդերացիաների ներկայացուցիչները եւ աշխարհի վարկանիշային առաջնություններից մեդալներով ու օլիմպիական ուղեգրերով վերադարձած մարզիկներըՀՀ ԿԳՄՍ նախարարությունում էին:

Նրանք հանդիպել են նախարարի եւ նրա տեղակալ Կարեն Գիլոյանի հետ:

Ժաննա Անդրեասյանը ներկայացրել է ուսումնամարզական հավաքների կազմակերպման, օրապահիկի, գործուղումների համար սահմանված գումարների չափաքանակը բարձրացնելու արդեն ընդունված որոշման մասին: Նա հույս է հայտնել, որ այս փոփոխությունը կնպաստի, որ ուսումնամարզական հավաքներն ավելի բարձր մակարդակով կազմակերպվեն, եւ բարելավվեն մարզիկների՝ մրցույթների մասնակցության պայմանները:

Կարեն Գիլոյանը եւս շնորհակալություն հայտնեց բոլոր մարզիկներին, հատկապես՝ ներկա երկու հավաքականներին՝ ընդգծելով, որ նրանք մեր երկրի համար իսկապես շատ ծանր շրջանում էին մեկնել մրցումներին:

«Անընդհատ կապի մեջ էի թիմերի հետ, եւ նրանք հոգեբանորեն ճնշված վիճակում էին: Հատկապես ըմբիշների մրցման օրերը շատ դաժան փուլի հետ համընկան: Դա էր նաեւ պատճառը, որ աշխարհի չեմպիոն չունեցանք, բայց փոխարենը 5 մեդալ եւ 5 օլիմպիական ուղեգիր նվաճեցինք», - ասել է Գիլոյանը:

Անդրադառնալով Սաուդյան Արաբիայում կայացած ԱԱ-ում ծանրամարտի հավաքականի մրցելույթներին՝ Գիլոյանը նշել է, որ սկզբում տպավորություն էր, թե լավ հանդես չէին գալիս, սակայն մարզիկները մեդալներ բերեցին, իսկ վերջում պարզվեց, որ թիմային պայքարում Հայաստանի հավաքականն Աշխարհի առաջնության առաջատարն է:

«Մեկ տարվա մեջ թիմային հաշվարկում Եվրոպայի ու Աշխարհի առաջնություններ հաղթել կարողանում են միայն հզորները», - շեշտել է նախարարի տեղակալը՝ վստահություն հայտնելով, որ Հայաստանը կունենա տղամարդկանց 3 եւ կանանց 1 օլիմպիական վարկանիշ:

Հանդիպման ընթացքում քննարկվել են ոլորտային մի շարք հարցեր, երկու ֆեդերացիաների ներկայացուցիչներն էլ բարձրացրել են իրենց հուզող կարեւոր խնդիրները, որոնց առնչությամբ նախարարը ներկայացրել է պետական քաղաքականությունը: Անդրադարձ է եղել նաեւ Արթուր Ալեքսանյանի անվան մարզադպրոցի շինարարության աշխատանքների ժամկետներին եւ ֆինանսավորման ընթացքին:

Հիշեցնենք, որ Բելգրադում անցկացված աշխարհի առաջնությունում հունահռոմեական ոճի ըմբիշներից արծաթե մեդալ եւ ուղեգիր էր նվաճել 97 կգ քաշային Արթուր Ալեքսանյանը, բրոնզե մեդալով եւ ուղեգրով է վերադարձել նաեւ Մալխաս Ամոյանը, իսկ Սլավիկ Գալստյանը բավարարվել էր միայն «Փարիզ-2024»-ի ուղեգրով: Ազատ ոճայինները 3 բրոնզե մեդալ եւ 2 օլիմպիական ուղեգիր էին նվաճել. 57 կգ քաշային Արսեն Հարությունյանը, 65 կգ քաշային Վազգեն Թեւանյանը եւ 70 կգ քաշային Արման Անդրեասյանը մեդալներ էին նվաճել: Հարությունյանն ու Թեւանյանը նաեւ «Փարիզ-2024»-ի ուղեգրեր են ապահովել:

Սաուդյան Արաբիայի մայրաքաղաք Էր-Ռիյադում կայացած ծանրամարտի աշխարհի առաջնությունում էլ մեդալակիրներ էին դարձել Վարազդատ Լալայանը (փոխչեմպիոն), Գոռ Սահակյանը (բրոնզե մեդալ), Անդրանիկ Կարապետյանը («Պոկում» վարժության փոքր ոսկե մեդալ), Սիմոն Մարտիրոսյանը («Հրում» վարժության փոքր արծաթե մեդալ), Ռաֆիկ Հարությունյանը («Պոկում» վարժության փոքր բրոնզե մեդալ) եւ Գարիկ Կարապետյանը («Պոկում» վարժության փոքր արծաթե մեդալ, երկամարտի եւ «Պոկում» վարժության աշխարհի ռեկորդներ):

ՀԵՏԱՔՐՔԻՐ

Ո՞ՒՐ Է ԱՆԴՐԵՆ ⇨

Ստեփանակերտում ծնված Անդրե Հովնանյանը կամ բոլորին հայտնի Անդրեն վերջին շրջանում կարծես ընդհատակ է անցել:

Դեռեւս այս տարվա մայիսին տեղի ունեցավ նրա եւ երգչուհի Անի Օհանյանի հարսանիքը: Այս մասին հայտնել էր հենց ինքը՝հրապարակելով տեսանյութ սոցիալական ցանցերի իր էջերում: Հարսանիքին ներկա էին փոքրաթիվ քանակությամբ հյուրեր:

Ավելի վաղ Անդրեն յուրօինակ ամուսնության առաջարկություն էր արել Անիին Տաթեւի վանքում:

Նշենք նաեւ, որ նրանց հարսանիքը հետաձգվել էր սեպտեմբերյան ռազմական գործողությունների պատճառով:

Տարեսկզբին Անդրեն բարդ վիրահատության էր ենթարկվել ԱՄՆ-ում, որից հետո վերադարձել էր Հայաստան ու մի քանի ամիս բնակվում էր հայրենիքում:

«Ժողովուրդ» օրաթերթը նկատեց, որ վերջին շրջանում երգիչը ոչ միայն լռում է իր հայրենիքի կորստի մասին, այլեւ ջնջել է սոցիալական ցանցերի իր էջերը: Թե ինչի հետ է կապված նրա այս լռությունը այն



պարագայում, երբ նա մշտապես գովերգում էր իր հայրենիքը, անհայտ է:

Hotel Grand 3

Hotel Grand 3 կամ նոր պատմություն՝ նոր եթերաշրջանում: Հոկտեմբերի 16-ին եթերում կհայտնվի Իննա Խոջամիրյանի եւ Գոշ Հակոբյանի համատեղ նախագծի հերթական եթերաշրջանը: Parie Media-ի հետ համատեղ դերասանները կիսվել են նախագծի անոնսով, որից պարզ է դառնում, որ, նախորդ եթերաշրջանների համեմատությամբ, տեղի են ունեցել դերասանական կազմի փոփոխություններ:

Ինստագրամյան իր էջում հրապարակված հոլովակին կից Խոջամիրյանը գրում է. «Սիրուն աշխատած ու փայփայած նախագիծը, որը ձեր դատին պիտի հանձնեինք դեռ 10 օր առաջ, գալիս է եթեր:

Սեր կա, հոգի կա, ու նոր պատմություն...

Շնորհակալ եմ իմ ուժեղ թիմին, գործընկերներին, բոլորին:

Հոկտեմբերի 16-ից ...»:

Թրեյլերից պարզ է դառնում, որ դերասանական կազմին են միացել Նազենի Հովհաննիսյանը, Խորեն Լեւոնյանը, Անի Խաչիկյանը եւ այլք:

Նախագծի սցենարիստն Անի Մաղաքյանն է: Նա ֆեյսբուքյան իր էջում հայտնել է, որ նախագիծը «փայփայել է» մոտ 2 տարի: «Իսկ հետո Իննան եւ Գոշը հավատացին դրան այնքան, որքան ես... Եվ մենք ստացանք Hotel Grand 3-ը»,- հավելել է նա:

«Ժողովուրդ» օրաթերթը շուտով իր ընթերցողներին կներկայացնի բացառիկ մանրամասներ Hotel Grand 3-ից:

ՄԱՐԻԱՄ ՂԱՋԱՐՅԱՆ

ՍՊՈՐՏ

ՀԱՅՏՆԻ Է ԱՆՁՆԱԿԱԶՄԸ

Հաստատվել է Լատվիա-Հայաստան ֆուտբոլային հանդիպումը սպասարկող մրցավարական անձնակազմը:

«Ժողովուրդ» օրաթերթի հաղորդմամբ՝ այս մասին հայտնում է Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիան: Հանդիպման մրցավար է նշանակվել Ռադե Օբրենովիչը, մրցավարի օգնականներ՝ Յուրե Պրապրոտնիկը եւ Գրեգա Կորտեժը: Չորրորդ պաշտոնյան կլինի Մարտին Մատոշան:

VAR-ի մրցավար է նշանակվել Նեյց Կայտազոցիչը, VAR-ի մրցավարի օգնական՝Ալեն Բորոշակը:

Հիշեցնենք, որ Լատվիա-Հայաստան հանդիպումը կկայանա հոկտեմբերի 12-ին՝ժամը 20:00-ին:

ՆԱԴԱԼԸ ԿՄԱՍՆԱԿՑԻ

«Մեծ սաղավարտի» մրցաշարերի 22-ակի չեմպիոն Ռաֆայել Նադալը կմասնակցի 2024թ. Ավստրալիայի բաց առաջնությանը. այդ մասին հայտնել է առաջնության տնօրեն Քրեյգ Թայլին. փոխանցում է ESPN-ը:

Աշխարհի նախկին առաջին ռակետը 2023թ. հունվարին վնասվածք էր ստացել Australian Open-ի երկրորդ շրջանում ամերիկացի Մաքենզի Մաքդոնալդի հետ մրցախաղում եւ դուրս մնացել պայքարից: Հունիսին 37-ամյա թենիսիստը վիրահատվել էր եւ այժմ անցնում է վերականգնողական փուլ:

«Մենք կարող ենք հաղորդել, որ Ռաֆան կվերադառնա: Մենք զրուցել ենք նրա հետ մի քանի օր առաջ: Նադալը հաստատեց, որ կմասնակցի Ավստրալիայի բաց առաջնությանը: Դա հրաշալի է»,- ասել է Թայլին:

Australian Open-ը տեղի կունենա հունվարի 14-28-ը:

«ԲԱՐՍԵԼՈՆԱՆ» ՀԵՐՔՈՒՄ Է

Իսպանիայի չեմպիոն «Բարսելոնայի» փոխնախագահ Էդուարդ Ռոմեուն հերքել է լուրերը, թե կատալոնական ակումբը պատրաստվում է մի քանի ամսով վարձակալել ամերիկյան «Ինտեր Մայամիի» եւ աշխարհի չեմպիոն Արգենտինայի հավաքականի 36-ամյա հարձակվող Լիոնել Մեսիին:

«Մեսիի հնարավոր վերադարձի մասին բոլոր խոսակցությունը չունեն ոչ մի հիմնավորում:

Մենք ցանկանում ենք արժանին մատուցել Մեսիին եւ անհամբեր սպասում ենք, թե երբ կկարողանանք մեծարել նրան հրաժեշտի խաղում: Նա արժանի է դրան: Երբ լինեն հարմար պայմաններ, կյանքի կկոչենք մեր գաղափարները»,- Ռոմեուի խոսքը մեջբերում է Barca Universal-ը:

Մեսին «Բարսելոնայում» հանդես է եկել 2003-2021 թվականներին, այնուհետեւ երկու տարի անցկացրել է ֆրանսիական ՊՍԺ-ում: Այս ամռանը նա երկու տարվա պայմանագիր կնքեց «Ինտեր Մայամիի» հետ: «Բարսելոնան» ցանկանում է հրաժեշտի հանդիպում կազմակերպել Մեսիի համար:

● Հոկտեմբերի 13-ին Սոս Սարգսյանի անվան Համազգային թատրոնում տեղի կունենա «Լոռեցի Սաքոն» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝2000-3000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՄԱՐԻԱՄ ՂԱԶԱՐՅԱՆԻ

ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

ՀԱՐՑ. Եթե ղաsrաաsվում եռf ճանաղարhոrդել Շենգենյան գոsու մի fանի ղեsություն, աղա ո՞r ղեsության դեսղանություն/հյուղաsոսություն ղեsf է դիմում ներկայացնել:

Գաբրիել Գաբրիելյան (26 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Դիմումը պետք է ներկայացվի այն պետության դեսպանատուն կամ հյուպատոսություն, որտեղ գտնվում է ճամփորդության միակ կամ հիմնական նպատակը: Եթե անհնար է որոշել հիմնական նշանակակետը, դիմումը ներկայացրե՛ք այն պետության դեսպանատուն կամ հյուպատոսություն, որտեղ ամենաերկար ժամանակահատվածով եք մնալու: Եթե Շենգենյան համաձայնագրի տարածքի մի քանի երկրներ այցելելու ժամկահատվածները հավասար են, հիմնական այցելության վայրը համարվում է այն երկիրը, որտեղ գտնվում է այցելության հիմնական նպատակը, օրինակ՝ համաժողովի մասնակցություն:

Չեխիայի Հանրապետության դեսպանություն Երեւանում

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Եթե հնարավոր չէ սահմանել այցելության հիմնական վայրը վերոնշյալ կերպով, ապա դիմումը ներկայացվում է Շենգենյան տարածքի այն երկրի դիվանագիտական ներկայացուցչություն, որը մուտք է գործում Շենգենյան տարածք, այսինքն՝ որը կայցելվի առաջինը:

ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ի՞նչ է երկչափ՝ 2D, եռաչափ՝ 3D, եւ fառաչափ՝ 4D, ՈՒԶՀ-ն:

Ելենա Բաղդասարյան (44 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Երկչափը՝ 2D, ՈՒՁՀ-ն ծավալային է, պատկերը ստացվում է հարթ՝ սեւ եւ սպիտակ:

Եռաչափի՝ 3D-ի ժամանակ, հետազոտությունը ծավալային է՝ օրգանը կամ հյուսվածքը հետազոտվում է իր խորությամբ, լայնությամբ եւ երկարությամբ: Պատկերներն այս դեպքում գունավոր են:

Իզմիրլյան բժշկական կենտրոն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Քառաչափը՝ 4D-ն, այն 3D ՈՒՁՀ-ն է, որին գումարվում է ժամանակը, այսինքն 4 դեպքում օրգանի վիճակը դինամիկ դիտվում է ընտրած ժամանակահատվածում եւ, անհրաժեշտության դեպքում, ֆիքսում պատկերը, տեսագրվում: 3D եւ 4D հիմնականում օգտագործվում են մանկաբարձության մեջ եւ մեծ դեր ունեն պտղի բնածին արատների հայտնաբերման գործում: Դուպլերի եւ դուպլեքսի ժամանակ հետազոտվում են երակները եւ զարկերակները:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Ֆուտբոլի Հայաստանի մինչեւ 21 տարեկանների հավաքականը ժամանել է Ռումինիայի մայրաքաղաք Բուխարեստ, որտեղ 2025 թվականի Եվրոպայի առաջնության ընտրական մրցաշարի խաղում կմրցի Ռումինիայի Մ-21 հավաքականի հետ:

Հայաստանի Մ-21 հավաքականը կհանգրվանի Parliament հյուրանոցում:

Ռումինիա Մ-21 - Հայաստան Մ-21 հանդիպումը տեղի կունենա հոկտեմբերի 13-ին եւ կմեկնարկի Երեւանի ժամանակով 21:30-ին:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________

Ազգանուն՝ ____________

Առաքման հասցե՝ ____________

Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ____________

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	0 - 4	+11 + 16
Կոտայքի լեռներ	0 - 3	+10 + 14
Կոտայքի նախալեռներ	+ 3 + 5	+14 + 17
Գեղարքունիք	- 3 + 1	+10 + 14
Լոռի	- 4 + 2	+10 + 13
Տավուշ	- 1 + 4	+13 + 17
Արագածոտնի լեռներ	0 - 4	+ 8 + 13
Արագածոտնի նախալեռներ	+3 + 6	+ 15 + 19
Արարատ	+ 6 + 8	+18 + 20
Արմավիր	+ 5 + 7	+18 + 20
Վայոց ձորի լեռներ	- 3 + 1	+13 + 15
Վայոց ձորի նախալեռներ	+ 6 + 8	+18 + 20
Սյունիքի հովիտներ	+ 6 + 9	+15 + 19
Սյունիքի նախալեռներ	+ 0 + 4	+ 8 + 13
ԼՂՀ	+ 5 + 9	+14 + 18
Երեւան	+ 6 + 9	+15 + 19

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **11.10.2023**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*